

ուր յառաջ կը բերուի Սամուէլ Եպ.է հաստատուած Պրուսայի Եկեղեցւոյն Մկրտութեան տոմարը։)

Կը մնար ինձ անձամբ ստուգել, թէ իրօք մեր Սամուէլն 1786ին Խասգիւղի գերեզմանոցը թաղուած է, ինչպէս կ'աւանդուի։ Այս նպատակաւ 1907 Մայիս 3ին գացի Խասգիւղ, Հայոց գերեզմանոցը, եւ երկար յուզելէն ետեւ՝ դոյս վերջապէս, լերան բարձունքին վրայ «Եաղուպեանց» անուանեալ գերեզմանաթաղին մէջ, փտած ու փրփրկած վանդակով պատեալ, մեր փնտռած Սամուէլ վ.ի գերեզմանաքարը, մեծ քար մը, վրան եպիսկոպոսական թագ մը, որուն տակը վարդապետական եւ եպիսկոպոսական գաւազաններ իրարու վրայ պառկած։ Ասոնց տակ կը կարդանք հետեւեալ տապանագիրը՝ (գրերէն ոմանք մենագիր,)

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆ
ԳԸՍՏԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ
ՎՐԴՊՏԻ ԵՒ ԱՐՔ ԵՊԻՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԻՃԱԿԻՆ
ՊՐՈՒՍԼՅԻՒՆ ՈՐ ԳՈԼՈՎ
ՈՒԹՍՈՒՆ ԱՄԼՅ ՀԱՆԳԵԱՒ
Ի ՔՍ Ի ԹՈՒԱԿԱՆԻՆ
ՀԱՅՈՑ ՌՄԼԵ

1786.

Եթէ ճշմարտիւ այս տեղ թաղուած է Սամուէլ վ. Երզնկացի, կը մնայ ստուգել Հռոմ թաղուած միւս Սամուէլ վ. Լաճեանի իսկու-